ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ 8

ք. Երևան **08 հունվարի 2019թ.**

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն (այսուհետև Պետական կառավարման մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի, որը գործում է Պետական կառավարման մարմնի կանոնադրության հիման վրա մի կողմից և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի «Ուսումնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետև Կազմակերպություն), ի դեմս կազմակերպության տնօրեն Լ.Բարխուդարյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին Կողմեր), հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի թիվ 5 հավելվածի N 8 աղյուսակը՝ բյուջետային ծախսերի գործառնական «Կրթություն» դասակարգման թիվ 09 բաժնի, «Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն» թիվ 05 խմբի, «Լրացուցիչ կրթություն» թիվ 02 դասի շրջանակներում հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստման ծառայություններ կատարելու նպատակով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 05.12.2018թ-ի «ՀՀ պետական եկամուտների կոմիտեի «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի 2019թ-ի տարեկան ուսումնական և վերապատրաստման ծրագրերը հաստատելու մասին» թիվ 734-Ա հրամանով հաստատված ծրագրերի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Պետական կառավարման մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված 188,680,100.00 (հարյուր ութսունութ միլիոն վեց հարյուր ութսուն հազար հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական կառավարման մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց

վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական կառավարման մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական կառավարման մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, պետական կառավարման մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական կառավարման մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական կառավարման մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. պետական կառավարման մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական կառավարման մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.8. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական կառավարման մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական կառավարման մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական կառավարման մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են ըստ եռամսյակների հետևյալ բաշխվածությամբ՝

Հազ. դրամ

Ծախսային հոդված	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
Ընթացիկ ծախսեր	47,170.0	94,340.1	141,510.1	188,680.1

Ընդ որում 1-ին եռամսյակի վճարումը կատարվում է մինչև 2019թ-ի հունվարի 25-ը, իսկ հաջորդ յուրաքանչյուր եռամսյակի ֆինանսավորումը՝ մինչև տվյալ եռամսյակի առաջին ամսվա 15-ը:

ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N1515-Ն որոշման 4-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ընդունվելուց հետո ՀՀ ՊԵԿ Ուսումնական կենտրոնը միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) պետք է վերադարձնի Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է իրականացնել փոխհատուցում պետական կառավարման մարմնին չիրականացված միջոցառման չափով: Պետական կառավարման մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական կառավարման մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 20.12.2017թ-ի «ՀՀ պետական եկամուտների կոմիտեի «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի 2018թ-ի տարեկան ուսումնական և վերապատրաստման ծրագրերը հաստատելու մասին» թիվ 429-Ա հրամանի հավելված 1-ով և հավելված 2-ով հաստատված ծրագրերը հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի միջև:

8.3. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	ՀՀ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ
Ք.Երևան, Մ. Խորենացու 7	Ք.Երևան, Ահարոնյան 12/3
ՀՀ ֆինանսների նախարարության	Երևանի թիվ 1 ՏԳԲ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 900018002585
Հ/Հ 900011054062	ՀՎՀՀ 00107399
ՀՎՀՀ 02647057	ՀՀ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն»
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար	ՊՈԱԿ-ի տնօրեն
Է. Գևորգյան	Լ.Բարխուդարյան

Հավելված 1
2019թ. հունվարի 8-ին
կնքված թիվ 8 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հ/Հ	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնա-ժամկետ	Պահանջվող գումար հազար դրամ
1	2	3	4	5	6	7
1	ՀՀ ՊԵԿ նախագահի 05.12.2018թ-ի թիվ 734-Ա հրամանով հաստատված 2019թ տարեկան ուսումնական և վերապատրաստման ծրագրեր	Հարկային և մաքսային օրենսդրության դրույթների փոփոխության և կիրառման ընթացակարգերի, «Հարկատու3» և այլ ծրագրերի, հաշվապահական հաշվառման, մաքսային հսկողության և վարչարարության, օտար լեզուների և այլ ուսուցման և վերապատրաստման աշխատանքներ	Հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստման, վերաորակավորման, մասնագիտական որակավորման բարձրացման, հատուկ ուսուցման և տեղեկատվական-վերլուծական նյութեր պատրաստելու և տպագրելու ծառայություններ	ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 10.12.2010թ-ի թիվ 2979-Ա և 2016 թվականի սեպտեմբերի 30-ի №184-Ա հրամաններով հաստատված կարգերի համապատասխան ապահովել նվազագույնը թվով 1,000 (մեկ հազար) ունկնդիրների ուսուցման՝ ընդհանուր առմամբ նվազագույնը 1000 ակ/ժամ տևողությամբ և թվով 1800 (մեկ հազար ութ հարյուր) ունկնդիրների վերապատրաստման՝ ընդհանուր առմամբ նվազագույնը 1200 ակ/ժամ տևողությամբ ծառայություններ	25.12.2019թ	**188,680.1**
					ԸՆԴԱՄԵՆԸ	**188,680.1**